ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԻՏԱԿԱՆ

Թ. ՏԱՐԻ 1895

Տարեկան 10 ֆր. ոսկի — 4 ռբ.:
Վեցամսեայ՝ 6 ֆր. ոսկի — 2 ռբ. 50 կ.:
ՄԷԿ ԹԻՒ Կ'ԱՐԺԷ 1 ֆր. — 50 կոպ.:

ԹԻՒ 2, ՓԵՏՐՈՒԱՐ

ԱԽՍԱԽՄԵԱՆՔԵՆ

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ՄԻ ՏԵՂԵՆԱՔԱՐ ԵՕԹՆԳԵՏԻՑ*

Հայերէն-ասորերէն արձանագրութեամբ:

Այս գեղեցիկ միակօրինակը (տապանաքարի) Հայերէն արձանագրութեամբ գտնուած է այն գերեզմանատան, որն՝ ինչպէս յայտնի է, այնքան առատ նիւթ է տուել Եօթնգետի Նեստորական արձանագիր գրականութեան** համար: Տապանաքարը գտել է Ն. Ն. Պանտուսով Պիշպէքի գերեզմանատան, ուր նա պեղումներ էր անում 1892 թուին ամառը, կայսերական Հնագիտական Յանձնաժողովի յանձնարարութեամբ[1]: Քարի լուսանկարը, որ ուղարկել էր պարոնը ուրիշ արձանագրութիւնների հարիւրաւոր նմանադրոշմների (estampage) եւ լուսանկարների հետ, հետաքրքրութիւն շարժեց Յանձնաժողովում. ուստի վերջինս դիմեց Պանտուսովին 1892 թուի յունուարի 29ին՝ խնդրելով նորան ուղարկել Պետերբուրգ իսկական քարը. խնդիրն անյապաղ կատարուեցաւ եւ 1893 թուի մայիս ամսից քարն արդէն գտնուում է կայս. Հնագ. Յանձնաժողովում:

Առաջադրած պատկերը հանուած է կտաւի վերայ տպագրական ներկով եւ ապա այն մասը, որ բռնում է Հայերէն արձանագրութիւնը, սեւացրած է տուշով նախատպի համեմատ: Նոյն իսկ նախատիպը տեղ տեղ այնպէս վնասուած է, որ առիթ է տալիս քանի մի կասկածների. այսպէս օրինակ, խաչի ներքեւում "Յովան" բառի մէջ, ո տառը ստացել է օի ձեւ, այն պատճառով միայն, որ պատահաբար կազմուած փոսիկները միացրել են նորա վարի ծայրերը. իսկ Վ

* Ուսուցչապետ Ն. Մառի հետաքրքրական մէկ յօդուածն է յաջորդը, զոր բարեհաճած է թարգմանել ռուսերէնէ (Записки Восточ. отд. Им. Русс. Арх. общ. VIII) Պր. Նիկողայոս Ադոնց: Շնորհակալութիւնիս կը յայտնենք Կայսերական Հնախօսական Ընկերութեան, որ հաճեցաւ յօդուածիս արձանագրութեան նմանանմանութիւնը խաւրել մեզ ի գործածութիւն մինչեւ որ ուրիշ Յարգ. հեղինակին: ԽՄԲ.

** Հնագրի „épigraphie եւ paléographie" օտար բառերը թարգմանել եմ՝ առաջինը "արձանագիր գրականութիւն", իսկ միտեղ "արձանագրական գիտութիւն", մնացին յարմարելով. իսկ երկրորդ բառը՝ "Հնագրութիւն": Այլ եւ հարկաւոր եմ համարել թարգմանել "Սեմիրեչիէ" աշխարհագրական անունը՝ "Եօթնգետ" կամ "Եօթնգետք" բառով: Ն. Ա.

1 Գործ թիւ 70. 1892 թուի. կ. Հ. Յ. Հնագիտական խուզարկութիւններ Քրիստ. Նեստոր. գերեզմանատան Պիշպէք եւ Թոխմախ քաղաքների մօտ: